ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-18/16 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	N 1 Կատարողի՝ <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացրած գրություն կանխավճար տրամադրելու վերաբերյալ և պատասխանատու ստորաբաժանման համաձայնությունը:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 4-րդ կետում ավելացնվել է նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ. <<4.1.1 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 286580 (երկու հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>
Փոփոխության հիմնավորում	N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-18/16 պայմանագրի 7.5 կետի պայմանը:

Պատվիրատու՝ ***<u>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն</u>***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18.10.2018թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-18/16 գնման պայմանագրի

ք. Երևան

14 .12.2018 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա մի կողմից, և <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Տ.Վիրաբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 18.10.2018թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-18/16 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4-րդ կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.1 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 286580 (երկու հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք.Երևան, Նոր Նորք,
կառավարական տուն 3	Բագրևանդի փ. 1/3, բն.39
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Այդի Բանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11808003015800
Հ/Հ 900011012607	ՀՎՀՀ 00883436
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Տ.Վիրաբյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.